

Հաշվետվություն

ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի գյուղապետարանի **2014 թ-ի հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը** կատարած աշխատանքների վերաբերյալ.

- Ընթացիկ ժամանակահատվածում անցկացրել ենք ավագանու երեք նիստ, կայացրել ենք որոշումներ, պատասխանել դիմումներին և գրություններին:
- Վճարել ենք գյուղապետարանի աշխատողների աշխատավարձը, չունենք սոց. վճարների և աշխատավարձի պարտքեր:
- Կիսամյակի ընթացքում հողի հարկի հավաքագրման ցուցանիշը կազմում է 79.4%, իսկ գույքահարկինը 100.3%, վարձակալական հողի վճարը 16.0%:
- Նխորդ տարվա համեմատ ծանր է հարկերի հավաքագրման գործընթացը, որի կարգավորման համար կենտրոնացրել ենք գյուղապետարանի և ավագանու ուժերը ցուցանիշը մինչև տարվա վերջ բարելավելու նպատակով:
- Կազմակերպված ձևով նախապատրաստվել ենք գարնան գյուղատնտեսական աշխատանքներին :
- Ժամանակին մաքրվել և վերանորոգվել է ներքին ոռոգման համակարգը:
- Համագործակցում ենք «ԽՈՅ» ջրամատակարար ընկերության հետ՝ համայնքը մշտական ոռոգման ջրով ապահովելու համար:
- Ստեղծվել է ժամանակավոր հանձնաժողով համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որը զբաղվում է ցորենի հնձի աշխատանքների կազմակերպման և հարկերի հավաքագրման գործընթացով:
- Համայնքի բազմաթիվ ընտանիքներ օգտվում են «Հայգյուղփոխբանկի» վարկային ծրագրից. որում իր մասնակցությունը ունի գյուղապետարանը:
- Ջրմուղ կոյուղու աշխատակիցների կողմից կատարվել է համայնքի խմելու ջրի ցանցի ուսումնասիրություն, սակայն խնդիրը մնում է դեռ չլուծված:
- Չնայած համայնքի առջև ծառայած կարևորագույն կենսական խնդիրները կամաց-կամաց իրենց լուծումն են ստանում, բայց դեռ կան չլուծված հարցեր, ինչպիսիք են խմելու ջուրը, դպրոցը, միջհամայնքային ճանապարհը, որոնք միշտ էլ եղել են գյուղապետի և գյուղապետարանի աշխատակիցների ուշադրության կենտրոնում, որոնց էլ փորձում ենք լուծում տալ մարզպետի անմիջական աջակցությամբ:

Համայնքի ղեկավար՝  / Ն. Հայրապետյան

(ստորագրություն)

